ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

ՄԱՐԶՊԱՆՅԱՆ Հ. Ա.

Տնտեսագիտության տեսության մեջ թերևս չկա ավելի վիճահարույց հիմնահարց, քան սեփականության խնդիրն է: Դա միանգամայն օրինաչափ է, քանի որ այն սերտորեն առնչվում է հասարակության ամենատարբեր խավերի շահերին ու պահանջմունքներին և առանց դրա համարժեք լուծման հնարավոր չէ պատկերացնել հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացն ընդհանրապես:

Սեփականության տնտեսագիտական բովանդակության մեջ արտահայտվում է արտադրական հարաբերությունների ողջ համակարգի էությունը, իսկ այդ համակարգն արտացոլող ամեն մի տնտեսական կատեգորիա սեփականության այս կամ այն ծավալուն արտահայտությունն է[1]: Ուստի սեփականությունը արտադրության (յուրացման) եղանակի դրսևորման պատմականորեն որոշակի սոցիալ-տնտեսական ձև է, իսկ սեփականության ձևերի բազմազանությունը տնտեսության բազմակացութաձևության արտացոլումն է: Պնդումը, թե սեփականության ձևը որոշում է արտադրության ձևը, նույնիմաստ է այն համոզման, թե արտադրության ձևը սեփականության պատմականորեն որոշակի ձև է:

Այստեղից հետևում է, որ սեփականության ձևերի բազմազանության մեջ արտահայտվում է արտադրաեղանակի զարգացման պատմական գործընթացը: Նշված առումով հիմնահարցի համակողմանի վերլուծության անհրաժեշտությունն ընդհանրապես կասկածից վեր է: Չնայած դրան (իսկ գուցեն հենց դրա համար)՝ խորհրդային տընտեսագիտության մեջ սեփականության ձևերի հարցը մշակվել է բավական մակերեսորեն: Դա միգուցե անիմաստ էլ էր պետական ամբողջատիրական սեփականության համատարած գերիշխանության պարագայում: Այլ է խնդիրը անցումային տնտեսության պայմաններում. հիմնահարցի մշակվածության մեթոդաբանական առումը վերստին կարևորվում է՝ պայմանավորված յուրացման ձևերի իրական բազմազանության բացահայտման, դրանց փոխազդեցությունների հստակեցման և սոցիալ-տնտեսական զարգացման հումանիզացման անհրաժեշտությամբ: Մանավանդ իրական սոցիալիզմի կենսունակության ապահովման տեսակետից սեփականության հայեցակետի նախկին գաղափարները չափազանց անարդյունավետ դուրս եկան:

Եթե վերացարկվենք պատմական որոշակիությունից, ապա սեփականության ընդհանրական էությունն առավել ճշգրտորեն կարող է արտահայտվել «մարդկային կենսակերպ» հասկացությամբ, ինչը բնութագրում է ինչպես «մարդ - մարդ», այնպես էլ «մարդ - բնու-

[1] **Маркс К., Энгельс Ф.** *Письма о “Капитале”, М., 1986, с. 23.*

թյուն» հարաբերությունները: Ասել է թե՝ կյանքը և սեփականությունը նույնական հասկացություններ են. կյանքը միանգամայն անպատկերացնելի է առանց սեփականության, ինչպես և սեփականությունը՝ առանց կյանքի: Սեփականությունը, հետևաբար, անհատի կողմից սեփական կենսապայմանների յուրացման գործընթացն է: Այն բովանդակում է ինչպես կյանքի օտարումը աշխատանքի ձևով, այնպես էլ դրա յուրացումը անձնական սպառման ձևով: Կյանքի արտադրությունը և վերարտադրությունը սեփականության գործառույթն է, որն իրագործվում է անհատի կողմից նյութական և հոգևոր բարիքների սպառման միջոցով. սա էլ հենց հասարակական արտադրության վերջնական նպատակն է:

Սեփականության՝ որպես մարդու ապրելակերպին ներհատուկ գործընթացի տնտեսագիտական բովանդակությունն անհնար է ըմբռնել առանց դրա՝ աշխատանքի և արտադրության գործընթացների հետ ունեցած փոխառնչությունների: «Չնայած մասնավոր սեփականությունն է հանդես գալիս որպես աշխատանքի օտարման հիմք և պատճառ,- գրում է Կ. Մարքսը,- իրականում այն, ընդհակառակը, դառնում է դրա հետևանքը… Մասնավոր սեփականությունը դառնում է, մի կողմից, օտարված աշխատանքի արդյունքը, իսկ մյուս կողմից՝ դրա օտարման միջոցը, այդ օտարման իրացումը»[2]:

Իրոք, ժամանակակից՝ ըստ էության աշխատանքահեն քաղաքակրթության պայմաններում անմիջական արտադրողի կողմից կենսամիջոցների յուրացման անհրաժեշտ (սակայն դեռևս ոչ բավարար) պայմանը աշխատանքն է. այսինքն՝ արտադրության գործընթացում ձևավորված հարաբերություններն այլ բան չեն, քան յուրացման պատմական ձև: Հետևաբար, «ամեն մի արտադրություն բնության առարկաների յուրացումն է անհատի կողմից որոշակի հասարակական ձևի մեջ ու դրա միջոցով: Այս առումով նույնաբանություն կլինի ասել, թե սեփականությունը (յուրացումը) արտադրության պայման է»[3]:

Ցավոք, ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ սեփականության կառուցվածքի, բովանդակության, ձևերի և, հատկապես, զարգացման ուղղվածության հիմնախնդիրները բավականաչափ խոր տեսական-մեթոդաբանական վերլուծության չեն արժանանում: Ամեն ինչ հանգեցվում է արտադրության միջոցների և աշխատանքի արդյունքների յուրացման իրավական կողմին, մասնավոր սեփականության բնականոնությանն ու հավերժականությանը, տիրոջ զգացումին և այլն: Մասնավորապես կուռ մեթոդաբանությամբ և պատշաճ հիմնավորվածությամբ չեն լուսաբանված հետևյալ հարցերը.

ա) ո՞րն է սեփականության՝ որպես համընդհանուր և պատմականորեն որոշակի հարաբերության սուբստանցը, որում խտացված է արտադրական հարաբերությունների ընդհանրական էությունը.

---

[2] **Маркс К., Энгельс Ф.** *Соч., 2-е изд., т. 46, ч. I, с. 97.*

[3] *Նույն տեղում, էջ 23:*

բ) ի՞նչ է սեփականությունը որպես յուրացում, և ի՞նչ կապ գոյություն ունի սեփականության իրավագիտական և տնտեսագիտական բովանդակության միջև.

գ) ի՞նչ միտում է դրսևորվում սեփականության հանրայնացման և յուրացման համակարգերի էվոլյուցիայի մեջ.

դ) արդյո՞ք որպես տնտեսական հարաբերություն՝ սեփականությունը երբևէ «կվերանա», ո՞րն է սեփականության պատմական հեռանկարը:

Վերոնշյալ բոլոր հարցերի տրամաբանորեն հիմնավորված պատասխանները կարելի է ստանալ ընդհանրապես մատերիալիստական աշխարհայեցողության և մասնավորապես արժեքի աշխատանքային տեսության, հետևողական կիրառման պարագայում: Այդ հայեցակետից անառարկելիորեն հետևում է, որ սեփականության սուբստանցը հենց աշխատանքն է: Այդ մասին դեռևս XVII դ. աներկբայորեն նշում էր անգլիացի հայտնի փիլիսոփա Ջոն Լոկը[4]: Նրանից ավելի քան մեկ և կես դար հետո Կ. Մարքսը երկրորդում է. «Ասել, թե աշխատանքի բաժանումը և փոխանակությունը հիմնված են մասնավոր սեփականության վրա, նույնն է, թե պնդել, որ աշխատանքը մասնավոր սեփականության էությունն է»[5]:

Կարելի է համոզված լինել, որ Կ. Մարքսի «Կապիտալում» արժեքի ձևի զարգացումը և ապրանքի մեջ մարմնացած աշխատանքի հատկությունները նաև (կամ հենց) այն պատճառով են առավել մանրակրկտորեն հետազոտվում, որովհետև արժեքը և սեփականությունն ընկալվում են որպես նույնական հասկացություններ: Նույնական այն իմաստով, որ թե՛ մեկի, թե՛ մյուսի սուբստանցը աշխատանքն է, ուստիև դրանք միևնույն էության արտահայտությունն են տարբեր կողմերից[6]:

Սակայն հետմարքսյան քաղաքատնտեսության մեջ սույն մեթոդաբանական մոտեցումը ոչ միայն հետևողականորեն չկիրառվեց, այլև գործնականում մոռացության մատնվեց: Այսպես, թեև սեփականությունը դիտարկվում էր որպես արտադրական հարաբերություն, որն առաջանում է արտադրության միջոցների և աշխատանքի արդյունքների յուրացման կապակցությամբ, միևնույն ժամանակ բուն աշխատանքի գործընթացը դուրս էր թողնվում սեփականության «դաշտի սահմաններից»: Մինչդեռ, ինչպես պարզորոշում է Կ. Մարքսը, «մասնավոր սեփականության սուբյեկտիվ էությունը՝ մասնավոր սեփականությունը որպես առանձնացված գործունեություն, որպես սուբյեկտ, որպես անձ, հենց աշխատանքն է» [7]: Եվ իրոք,

---

[4] **Локк Дж.** *Избранные философские произведения, т. 2, М., 1960, с. 28.*

[5] **Маркс К., Энгельс Ф.** *Соч., 2-е изд., т. 42, ч. I, с. 144.*

[6] *Դժվար չէ նկատել, որ խնդրո առարկային այլ մոտեցում ցուցաբերելու պարագայում հազիվ թե հնարավոր լիներ պնդել, թե ապրանքային արտադրության մահացումը կապված է մարդուն կեղեքող աշխատանքի բաժանման և մասնավոր սեփականության վերացման հետ (տե՛ս* **Մարքս Կ.** *և* **Էնգելս Ֆ.**, *Ընտիր երկեր, երեք հատորով, հ. 1, էջ 41, 79-80):*

[7] **Маркс К., Энгельс Ф.** *Соч., 2-е изд., т. 42, ч. I, с. 108.*

քանի որ աշխատանքը տնտեսական բարիքների արտադրությանը միտված մարդու կենսագործունեության անմիջական արտահայտությունն է, նրա կենսական էներգիայի, մտավոր ուժի, նյարդերի ծախսումը, ուստի սեփականությունը նրա կենսակերպն է, մարդու ինքնավերարտադրությունը՝ ինքնաօտարման ճանապարհով:

Սեփականության կառուցվածքում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի անձնական սեփականությունը, թեև խորհրդային համակարգում հասկանալի պատճառներով հենց այդ հարցին էր առավել քիչ ուշադրություն դարձվում: Որոշ դեպքերում նույնիսկ արծարծվում էր այն միտքը, թե սոցիալիստական հասարակության մեջ անձնական սեփականության զարգացումը կարող է միայն «պրոբլեմներ» առաջացնել[8]: «Մոռացության» էր մատնվում այն անհերքելի իրողությունը, որ անձնական յուրացման մեջ խտացվում է ընդհանրապես սեփականության էությունը, որ դրանում իրացվում է ամեն մի արտադրության վերջնական և որոշակի նպատակը:

Անձնական սեփականությունը սպառողական բարիքների ոչ արտադրողական, անձնական յուրացումն է, դրանց սպառումը: Որպես անհատի կյանքի նյութական սուբստանց՝ այն համընդհանուր հարաբերություն (կատեգորիա) է, որի պատմական բնույթը դրսևորվում է միայն սպառողական բարիքների փոփոխվող որակի և բազ-մազանության մեջ: Ուստի անձնական սեփականությունը չի կարող վերացվել ո՛չ մասնավոր կապիտալիստական, ո՛չ էլ հանրային սոցիալիստական սեփականության զարգացմամբ:

Անձնական սեփականությունը, որն իրացվում է անձնական սպառման մեջ, անհատի անձնական ազատության և հումանիստական ինքնաիրացման հիմքն է: Այն արտադրության հակառակ երեսքն է և դուրս է արտադրական հարաբերությունների համակարգից: Ավելին, որպես «բացասական արտադրություն»[9], անձնական սպա-ռումը հակադրվում է արտադրական հարաբերություններին և դրրանք արտահայտող սեփականության ձևերին՝ տարածվելով միայն անձնական սպառման ենթակա տնտեսական բարիքների վրա: Եվ որպես այդպիսին՝ այն գործ ունի միայն ապրանքների սպառողական արժեքի հետ, հետևաբար չափազանց պայմանականորեն կա-րող է համարվել քաղաքատնտեսական հետազոտությունների առարկա[10]:

---

[8] *Տե՛ս* **Мкртчян А.** *Собственность: вопросы трактовки (Экономические науки, 1987, N 1);* **Габа З.** *Общественная собственность: вариант политико-экономического анализа (Экономические науки, 1988, N 2).*

[9] Տե՛ս **Маршалл А.** *Принципы экономической науки, т. 1, М., 1993, с. 123.*

[10] *Պատահական չէ, որ ո՛չ դասական քաղաքատնտեսության հիմնադիրները, ո՛չ էլ մարքսիզմի տեսաբանները երբևէ չեն խոսել սպառման տնտեսական օրենքների կամ հարաբերությունների մասին: Ըստ Ֆ. Էնգելսի դասական ձևակերպման՝ քաղաքատնտեսությունն ամենալայն առումով գիտություն է հասարակության մեջ կենսական բարիքների արտադրությունն ու փոխանակությունը (այլ ոչ թե սպառումը) կառավարող օրենքների վերաբերյալ (Տե՛ս* **Маркс К., Энгельс Ф.** *Соч., 2-е изд., т. 20, ч. I, с. 150):*

Այդուհանդերձ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով սովորաբար էական տարբերություն չի դրվում անձնական, անհատական և մասնավոր սեփականությունների միջև: Այնինչ դրանք միմյանցից տարբերվում են ինչպես ծագումնաբանորեն, այնպես էլ յուրացման բնույթով:

Ի տարբերություն անձնականի՝ անհատական սեփականությունը արտադրողական յուրացման ձև է, որը պատմականորեն նախորդել է ապրանքային արտադրությանն ու մասնավոր սեփականությանը: Անհատական սեփականության վրա է հիմնվում նախաինդուստրիալ հասարակություններին բնորոշ բնատնտեսային արտադրությունը, յուրացման անհատականորեն առանձնացված եղանակով: Վերջինս պայմանավորված է կա՛մ ավանդական տոհմացեղային և ընտանեկան կապերով, կա՛մ անձնական կախվածության աստիճանակարգային հարաբերություններով, որովհետև «…անհատների հասարակական հարաբերությունները նրանց աշխատանքի մեջ երևան են գալիս այստեղ հենց իբրև նրանց սեփական անձնական հարաբերություններ և ոչ թե պարուրվում են իրերի– աշխատանքի արդյունքների – հասարակական հարաբերությունների զգեստի մեջ»[11]:

Անհատական յուրացման համակարգում արտադրողի աշխատանքը մարում է դրա արդյունքների անմիջական յուրացման եղանակի մեջ: Այստեղ արտադրության միջոցներն օգտագործվում են միայն որպես սպառողական արժեքներ. ո՛չ աշխատանքը, ո՛չ էլ աշխատանքի պայմանները դուրս չեն գալիս անհատական վերարտադրության շրջանակներից: Հետևաբար, անհատական սեփականությունն արտահայտում է ոչ թե սոցիալ-տնտեսական, այլ սոցիալ-անձային հարաբերություններ:

Այսպիսով, անհատական սեփականությունն արտահայտում է մարդու անհատականորեն առանձնացված հարաբերությունը բնության նկատմամբ: Այստեղ աշխատանքը չի ընդունում օտարված ապրանքային կերպարանք, չի ներառվում հասարակական կոոպերացիայի մեջ և չի վերածվում մասնավոր աշխատանքի, քանի որ յուրացումն ունի անհատական բնույթ:

Անձնական և անհատական սեփականությանն իր բնույթով հակադիր է մասնավոր սեփականությունը, քանի որ այն արդեն որպես հասարակական հարաբերություն չի մարում սպառման մեջ և ամեն անգամ իբրև փյունիկ վերածնվում է հենց փոխանակությունից՝ մնալով հավերժ երիտասարդ: Մասնավոր սեփականությունը ապրանքային արտադրության կատեգորիա է և, որպես յուրացման պատմական ձև, բնութագրում է անհատի արտադրության այնպիսի եղանակ, որը հիմնված է աշխատանքի հասարակական բաժանման ու կոոպերացիայի վրա: Հենց դրա շնորհիվ էլ անհատի աշխատանքը վերածվում է մասնավոր սեփականության և հասարակական արտադրողական ուժի:

Մասնավոր սեփականությունը, որպես հասարակական արտադրողական ուժ, կարևոր դեր ունի տնտեսության զարգացման հումանի-

---

[11] **Մարքս Կ.,** *Կապիտալ, հ. 1, Ե., 1954, էջ 85-86:*

զացման գործում: Սակայն դա չի նշանակում, թե միայն մասնավոր սեփականությունն է անձի տնտեսական ու քաղաքական ազատության հիմքը: Այդ պատկերացումը ծագում է սեփականության իրավական ձևից, երբ անձնական սեփականությունը նույնացվում է մասնավորի հետ՝ ժխտելով վերջինիս պատմական բնույթը: Մինչդեռ մասնավոր սեփականության բուն հասարակական դերը բացահայտելու տեսանկյունից առավել կարևոր է այն դիտարկել որպես որոշակի կենսակերպ, որպես յուրացման պատմական եղանակ: Այս դեպքում ակնհայտ է, որ այն մարդու արտադրության ընդհանուր հիմքն է աշխատանքահեն քաղաքակրթության պայմաններում: Դա հնարավոր չէ վերացնել իրավական ակտերով, քանի դեռ յուրացման սուբստանցը աշխատանքի հասարակական օտարումն է: Այնպես որ սոցիալիզմը չէր կարող և չվերացրեց մասնավոր սեփականությունը՝ որպես տնտեսական երևույթ, քանի որ չէր կարող վերացնել տնտեսական աշխատանքը: Վերացարկվել այս օբյեկտիվ իրողությունից կնշանակի տուրք տալ սոսկ սեփականության իրավական բովանդակությանը:

Իր զարգացման ընթացքում մասնավոր սեփականությունն ընդունում է երկու հիմնական ձև՝ մասնավոր - աշխատանքային (սեփականատերը և աշխատողը միևնույն անձն են) և մասնավոր-կապիտալիստական (սեփականատերը և վարձու աշխատողը տարբեր անձեր են): Ընդ որում, կապիտալիստական մասնավոր սեփականությունը՝ որպես կապիտալ, մասնավոր սեփականության ավարտուն արտահայտությունն է, օտարված աշխատանքի բարձրագույն դրրսևորումը: Որպես հասարակական արտադրողական ուժ՝ այն իր արտահայտությունն է գտնում ինչպես արտադրության միջոցներում, այնպես էլ աշխատուժի, փողի, արժեթղթերի և մասնավոր սեփականության այլ կատեգորիաների մեջ: Ինչպես նկատում է պրոֆեսոր Ի. Վ. Պշենիցինը, խորհրդային քաղաքատնտեսության գաղափարական սահմանափակության պատճառներից էր մեթոդաբանական «անընդունակությունը՝ կապիտալիստական արտադրաեղանակն ընկալել որպես տնտեսական զարգացման աղբյուր, որից ամեն ինչ սկսվում է նորից, և որն իր բնական զարգացմամբ կանխորոշում է հասարակության և սեփականատիրական հարաբերությունների փոփոխությունը»[12]:

Ըստ հանրայնացման աստիճանի՝ մասնավոր սեփականությունը (ինչպես մասնավոր-աշխատանքայինը, այնպես էլ մասնավոր-կապիտալիստականը) կարող է հանդես գալ ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեկտիվ սեփականության տարատեսակներով: Կոլեկտիվ սեփականությունը, իր հերթին, դրսևորվում է հանրայնացման բազմազան՝ կոոպերատիվ, տեղական ինքնակառավարման, խառը, համաժողովրդական և այլ ձևերով:

Մասնավոր սեփականության հանրայնացման ձևերը չի կարելի նույնացնել հասարակական սեփականության հետ, չնայած դրանց

[12] **Пшеницын И. В.** *Исследование о природе капитала и формах его развития, М., 2008, с. 290.*

միջև առկա է անմիջական փոխկապակցություն: Աշխատանքի հանրայնացման գործընթացն ամենից առաջ մասնավոր սեփականության հանրայնացման գործընթաց է, սակայն այն միաժամանակ նաև տնտեսական աշխատանքի աստիճանաբար սահմանափակման գործընթաց է: Չէ՞ որ դրա շնորհիվ առաջանում է նոր՝ հասարակական արտադրողական ուժ, որն անհատի հետ փոխազդում է այնպես, ինչպես բնատուր արտադրողական ուժը: Ուստի միայն հետարդյունաբերական տեխնոլոգիաների և աշխատանքի հանրայնացման բավականաչափ բարձր մակարդակի պայմաններում կարող է որակական թռիչք կատարվել մասնավոր սեփականությունից դեպի հասարակական սեփականությունը:

Մասնավոր սեփականության հանրայնացման բարձրագույն ձևը, իհարկե, համաժողովրդական սեփականությունն է: Վերջինս կոլեկտիվ սեփականության ձև է և չի կարելի շփոթել բուն հասարակական սեփականության հետ: Ճիշտ է, իրավական առումով դրանք երկուսն էլ բնութագրվում են յուրացման օբյեկտների նկատմամբ քաղաքացիների հավասար վերաբերմունքով: Սակայն համաժողովրդական սեփականությունը չի վերացնում աշխատանքի օտարումը և չի հաղթահարում անհատի տնտեսական կախումը:

Հետևաբար հասարակական սեփականությունը ենթադրում է սեփականության՝ որպես արտադրական հարաբերության վերացում: Իսկ դա հնարավոր է միայն տեխնոլոգիական զարգացման այնպիսի մակարդակում, երբ մարդն իր աշխատանքը կփոխարինի բնատուր ուժերով և հիմնական արտադրողական ուժը կդարձնի գիտությունը: Այդ հիման վրա կարելի է եզրակացնել, որ արտադրության ժամանակակից եղանակն անցումային, խառը բնույթ է կրում, քանի որ դրանում փոխազդում են մասնավոր և հասարակական սեփականությունը՝ վերջինիս համեմատաբար ավելի արագ ընդլայնման միտումով: Դա նշանակում է, որ ժամանակակից քաղաքակրթությունը հասել է զարգացման այն շեմին, որից այն կողմ սկսվում է մարդկության իսկական պատմությունը՝ գործնական հումանիզմի պատմությունը:

Ընդհանրապես, սեփականատիրական հարաբերությունների պատմական զարգացման մեջ կարելի է առանձնացնել արտադրության տարբեր եղանակներին առավելապես բնորոշ յուրացման չորս համակարգ. 1) ըստ աշխատանքի, 2) ըստ արժեքի, 3) ըստ արտադրության գնի, 4) ըստ պահանջմունքի:

Ինչպես հայտնի է, սոցիալիզմի հիմնական սկզբունքներից էր ըստ աշխատանքի յուրացումը: Ելնելով մասնավոր սեփականության՝ որպես օտարված աշխատանքի էությունից, հարկ է նկատի առնել, որ ըստ աշխատանքի յուրացումն ընդհանրապես բարձրարտադրողական աշխատանքի խթանման սկզբունք է, կիրառվել է ամենատարբեր տնտեսակարգերում և բոլորովին էլ սոցիալիզմի «մենաշնորհը» չէ:

Այսպես, իր նախնական իմաստով ըստ աշխատանքի յուրացումը նույնական է անհատական սեփականությանը՝ անհատական-առանձնացված բնատնտեսային արտադրությամբ: Այս համակարգում

աշխատանքն օտարվում է անմիջականորեն անհատական ձևով և մարում արտադրված (յուրացված) արդյունքի սպառողական արժեքի մեջ[13]: Անհատի արտադրությունը նույնպես վերջին հաշվով անհատական-առանձնացված բնույթ ունի և չի կարող իրագործվել առանց նրա կամ նրա ընտանիքի՝ ներարտադրական պարզ կոոպերացիայի շրջանակներով սահմանափակված աշխատանքային գործունեության:

Աշխատանքի հասարակական բաժանումն ու ապրանքային արտադրության առաջացումը վերափոխում են կյանքի արտադրության անհատական-առանձնացված եղանակը. ձևավորվում և զարգանում է մասնավոր սեփականությունը՝ հիմք դնելով կոլեկտիվով միջնորդավորված յուրացման: Ընդ որում, աշխատանքի օտարումն ընդունում է հասարակական բնույթ, և անհատի սեփական աշխատանքի արդյունքն արդեն հակադրվում է նրան ապրանքի ձևով: Իսկ ապրանքը ոչ միայն մասնավոր սեփականության դրսևորման ձևն է, այլև աշխատանքի արդյունքների միջնորդավորված հանրայնացման և յուրացման ձև:

Նոր տնտեսական հարաբերությունների արմատավորմամբ անհատական արտադրողական ուժը վերաճում է բազմապատկված հասարակական արտադրողական ուժի: Համապատասխանաբար թե՛ բովանդակությամբ, թե՛ ձևով փոփոխության է ենթարկվում նաև յուրացումը. այն արդեն տեղի է ունենում ոչ թե ըստ աշխատանքի, այլ ըստ արժեքի: Փոխանակությունից յուրաքանչյուրը կորզում է ավելի շատ, քան յուրացնում էր անհատական-առանձնացված արտադրության ժամանակ: Յուրացման այս համակարգում անհատը յուրացնում է ուրիշի աշխատանքի արդյունքը՝ ապրանքի ձևով օտարելով իր սեփական աշխատանքը: Անհատի կողմից յուրացումը պայմանավորված է ոչ միայն նրա սեփական աշխատանքով, այլև հասարակական արտադրողական ուժին տիրապետելու աստիճանով: Այսինքն՝ այն, ինչը յուրացնում է անհատը, կարող է արժենալ ավելի կամ պակաս, քան նրա սեփական աշխատանքի ծախսումներն են, քանի որ արժեքը որոշվում է հասարակությանն անհրաժեշտ աշխատանքային ծախսումներով:

Ապրանքային տնտեսության պայմաններում աշխատանքի օտարման և հանրայնացման էվոլյուցիան տեղի է ունենում երկու՝ 1) ապրանքափոխանակության և 2) ապրանքափողային փոխանակության (ապրանքաշրջանառության) փուլերով: Եթե առաջին փուլի ժամանակ շուկան համեմատաբար սահմանափակ է և կանխատեսելի, ապա փողի առաջացումը նշանավորում է աշխատանքի անհամեմատ ավելի լայն կոոպերացիա՝ տարածվելով ընդհուպ միջպետական մասշտաբի: Փողի՝ որպես համընդհանուր համարժեքի մեջ իր

---

[13] *Արտադրության այս եղանակի պայմաններում, երբ բնականոն ձևով առաջանում է զգալի գույքային անհավասարություն, շահագործումն իրականացվում է անմիջական արտադրողների (ստրուկների, ճորտերի, ունեզուրկ ու կախյալ գյուղացիների) աշխատանքի ուղղակի օտարման ճանապարհով: Ուրիշի աշխատանքի յուրացման այլ եղանակ, քան ուղղակի բռնությունն է, չկա և չի կարող լինել:*

ավարտուն արտահայտությունն է ստանում անհատից օտարված աշխատանքի հանրայնացումը:

Սակայն անհատի աշխատանքի օտարումն ապրանքի ձևով (իսկ այնուհետև՝ նաև փողի) նրան հակադրվում է իբրև ինչ-որ արտաքին հասարակական կեցություն, իբրև օբյեկտիվացված հասարակական կյանք, ինչը նախադրյալ է ինչպես նրա հետագա հասարակական օտարման, այնպես էլ սեփականության զարգացման համար: Հենց այդ օտարումն էլ կապիտալին հնարավորություն է ընձեռում սկզբնապես իր տնօրինության տակ վերցնելու ապրանքարտադրողների կապի համընդհանուր միջոցը՝ փողը, հետևաբար և շուկայի մեխանիզմը, իսկ այնուհետև՝ աստիճանաբար նաև բուն արտադրությունը: Սակայն դրա համար կապիտալն աշխատանքի օտարումը պետք է հասցնի մինչև անհատի ինքնաժխտման աստիճանի մինչև նրա լիակատար տարրալուծմանը հասարակական արտադրողական ուժի մեջ:

Արտադրության կապիտալիստական եղանակի արմատավորմամբ մասնավոր սեփականության էությունը չի փոխվում, սակայն ըստ արժեքի յուրացումը դառնում է փոխանակության համարժեքության ապահովման սոսկ ամենաընդհանուր հիմքը: Դա նշանակում է, որ արժեքի օրենքն ավելի շուտ հանդես է գալիս մակրոտնտեսական կարգավորիչի դերում, իսկ յուրացումն իրականացվում է արժեքային-կապիտալիս-տական սկզբունքով՝ ըստ արտադրության գնի:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կապիտալիստական արտադրության արհեստավորական տիպի պայմաններում արտադրության եղանակը և յուրացման համակարգն ընդհանուր առմամբ միմյանց չեն հակասում: Խոշոր մեքենայական արդյունաբերության զարգացման և արտադրության՝ հիրավի հասարակական գործընթացի վերաճման շնորհիվ արմատական հեղաշրջում է տեղի ունենում հենց արտադրության եղանակում: Դրա հետևանքով ի հայտ է գալիս կապիտալիզմի հիմնական հակասությունը արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր-կապիտալիստական ձևի միջև: Կապիտալն աշխատանքի շահագործումից արդեն անցնում է գիտատեխնիկական առաջընթացի շահագործմանը: Դա նշանակում է նաև, որ սկսվել է արտադրության մինչև այդ անխախտ հիմքի՝ տնտեսական աշխատանքի աստիճանական վերացման և կապիտալիզմի ընդերքում հասարակական սեփականության սաղմնավորման գործընթացը[14]:

---

[14] *Հարցին այս տեսանկյունից մոտենալիս հնարավորություն է ընձեռվում նաև ձերբազատվելու տնտեսական պատմության որոշակի իրադարձությունների բովանդակության ու հետևանքների կաղապարված մեկնաբանումներից: Այսպես, XVIII դ. սկզբում Անգլիայում ծավալված լուդիտների շարժումը փաստորեն պայքար էր հանուն մասնավոր-կապիտալիստական սեփականության, պայքար՝ ընդդեմ սոցիալիզմի իրական հիմքերի, այլ ոչ թե ընդդեմ կապիտալի, ինչպես ներկայացվում էր խորհրդային պատմագրության մեջ (տե՛ս* Экономическая энциклопедия: политическая экономия, т. 2, М., 1975, с. 370, *Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, 1978, էջ 675):*

Այդ գործընթացը կապիտալի շարժման մեջ է ներքաշում այնպիսի արտադրողական ուժերի, որոնք չեն ընդգրկվում յուրացման մասնավոր-կապիտալիստական համակարգում: Սկիզբ է առնում հասարակական-կապիտալիստական սեփականության և մասնավոր-կապիտալիստական սեփականության միջև հակասության ու պայքարի դարաշրջանը:

Ներկայումս արդեն ակնհայտ է, որ դասական մարքսիստական տնտեսագիտության տեսության մեջ թերագնահատվել է այն դերը, որ վերապահված է հասարակական-կապիտալիստական սեփականությանը՝ մասնավոր-կապիտալիստական սեփականության ճգնաժամի ու կործանման հարցում[15]: Լինելով կապիտալի ծնունդը և դրա զարգացման իրական հիմքը՝ հասարակական-կապիտալիստական սեփականությունն ի վերջո վերածվում է այն իրական ուժի, որն ունակ է թոթափելու կապիտալի անսահմանափակ տիրապետությունը:

Բանն այն է, որ աշխատանքի օտարման ճանապարհով գիտատեխնիկական առաջընթացն իր շահերին ծառայեցնելու գործառույթը կապիտալն իրականացնում է անհատույց յուրացման ձևով: Այն պարզապես գենետիկորեն չի կարող զարգանալ՝ առանց ոչնչացնելու համարժեքային- աշխատանքային յուրացումը: Այդ գործընթացի ներքին հակասականությունն այն է, որ օգտագործելով արտադրության նոր հասարակական եղանակը՝ կապիտալը փորձում է այն «տեղավորել» այնպիսի իրավական ձևերում, որոնք մասնավոր սեփականատիրական հարաբերությունների արտահայտությունն են:

Կապիտալի համակենտրոնացումն ու կենտրոնացումն է՛լ ավելի են նպաստում բնատուր արտադրողական ուժերի զարգացմանն ու շահագործմանը: Էապես վերափոխվում են նաև յուրացման հարաբերություններն ու յուրացման չափը: Արտադրության ինդուստրացման և զանգվածային սպառողական պահանջարկի հսկա-

---

[15] Մի շարք ուսումնասիրություններում, այդուհանդերձ, մարքսիզմի տեսաբաններն անուղղակիորեն զարգացրել են այս միտքը՝ շեշտը դնելով ավելի շատ ոչ թե հասարակական-կապիտալիստական սեփականության բովանդակության, այլ դրսևորման ձևերի վրա: Այսպես, բաժնետիրական կապիտալի էությունն ու դերը բացահայտելիս Կ. Մարքսն արդեն հանձարեղ կանխատեսում է կատարում այն մասին, որ խոշոր բաժնետիրական ընկերությունների՝ ըստ էության հանրային ձեռնարկությունների հետագա զարգացումը կհանգեցնի դասական կապիտալիզմի ինքնաոչնչացման (Տե՛ս **Маркс К., Энгельс Ф.** *Соч., 2-е изд., т. 27, ч. 2,с. 378-381): Ենթադրվում է, որ մասնավոր-կապիտալիստական սեփականության վերացումը հասարակական-կապիտալիստական սեփականության զարգացման արդյունքն է: Մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանի գլխավոր վերլուծաբաններից մեկը՝ Վ. Ի. Լենինը, ուղղակիորեն նշում էր, որ մոնոպոլիստների տիրապետության պայմաններում արդեն առկա է պլանաչափություն (Տե՛ս* **Ленин В. И.** *Полн. собр. соч., т. 6, с. 232, т. 31, с. 355): Սակայն պլանաչափությունն ինքնին չի կարող կայանալ առանց հասարակական սեփականության, քանի որ այն վերջինիս գոյության ու զարգացման ձևն է: Ակնհայտ է, որ Վ. Ի. Լենինը խոսում է արդյունաբերական տեխնոլոգիաների և մոնոպոլիաների տիրապետության վրա հիմնված արտադրության եղանակը բնութագրող կարևորագույն հարաբերության դրսևորման ձևի մասին՝ առանց անդրադառնալու դրա բովանդակությանը:*

յածավալ աճի երևույթներում կապիտալը հայտնաբերում է կապիտալիստական արտադրաեղանակի զարգացման լրացուցիչ ռեսուրսներ: Դրա շնորհիվ շահում է բնակչության մեծամասնությունը և՛ բացարձակ, և՛ հարաբերական կտրվածքով: Իսկ արտադրողական ուժերի զարգացման ամբողջ տրամաբանությունն էլ հենց այդ է. եթե դրանց զարգացումը նպաստում է պահանջմունքների աճի օրենքի իրացմանը, յուրացման համակարգի հումանիզացմանը և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, ապա դրանով իսկ արդարացվում է տնտեսական համակարգի գոյությունը և խրախուսվում զարգացումն այդ համակարգի շրջանակներում:

Հասարակական-կապիտալիստական սեփականության զարգացմանը համընթաց էական փոփոխությունների է ենթարկվում նաև կապիտալի համընդհանուր ձևը՝ փողը, որն «ստիպված է» հրաժարվել իր «կուսական» ձևից այն պարզ պատճառով, որ արդեն արտահայտում է նոր, այլ բնույթի հարաբերություններ: Համարժեքային փոխանակության աղավաղումն անխուսափելիորեն հանգեցնում է փողի՝ որպես ոսկու արժեքը ներկայացնող համընդհանուր համարժեքի արժեզրկման: Փողն աստիճանաբար կտրվում է իր ոսկի-արժեքային հիմքից՝ վերածվելով բաշխման, կարգավորման և իշխանության գործիքի:

Այս պայմաններում համակարգի ձևական հարմարվողականության ապահովման գործոն է դառնում արժեքի փողային ձևի շարունակաբար կտրվելն իր իսկ բուն բովանդակությունից: Դա ի հայտ է գալիս նրանում, որ փողի գործառույթները սկսում են իրականացնել նրա շինծու փոխարինիչները՝ մուրհակները, պարտատոմսերը, չեկերը, ավանդները, պետական և կորպորատիվ արժեթղթերը և այլն: Իրական կապիտալը աստիճանաբար ավելի ու ավելի է փոխակերպվում զանազան արժեթղթերի տեսք ընդունած կեղծ կապիտալի: Վերջինս, շրջանառվելով իրական կապիտալից հարաբերականորեն անկախ, հակասական և ըստ էության կազմալուծիչ զարգացումներով, վերափոխում է հասարակական-տնտեսական հարաբերություն-ների մեգահամակարգն ընդհանրապես և մասնավորապես՝ սեփականության իրավունքները և յուրացման համակարգերը թե՛ ազգային, թե՛ միջազգային կտրվածքով: Ապրանքային արժեքի, հետևաբար և մասնավոր սեփականության հետ փողն իր կապերը վերջնականապես «խզում է» ոսկու պարիտետի համակարգի փլուզ-մամբ:

Հասարակական սեփականության զարգացումը փողային ձևի փոխակերպումներում դրսևորվում է հակասական միտումներով: Մի կողմից՝ համաշխարհային մասշտաբով յուրացման համակարգի հումանիզացմանը զուգընթաց փողային ձևն ակնհայտորեն կտրվում է իրական հիմքից, մյուս կողմից վերածվում է համաշխարհային մասշտաբով ֆինանսական օլիգարխիայի տնտեսական գերիշխանության կառավարման գործիքի: Թեև այս գործընթացում հաճախ աչքի է զարնում գերհզոր երկրների ձգտումը՝ վերահսկելու զարգացող և հետամնաց երկրների բնական ռեսուրսները, այնուամենայնիվ, դրանք խոշոր հաշվով գլոբալ կտրվածքով արտադրության և յու-րացման հանրայնացման արտահայտություններն են: Ասել է թե՝

արժեքաստեղծ աշխատանքի սահմանափակմանը զուգընթաց՝ արժեքի համարժեքային ձևը աստիճանաբար ավելի մեծ չափերով ստանձնում է բաշխման գիտակցական կարգավորման լծակի դերը, քանի որ հասարակական սեփականության զարգացումն աստիճանաբար օրակարգից հանում է համարժեքային յուրացման հիմնահարցը: Այդ մասին են վկայում ներքին և արտաքին մարդասիրական օգնության աճող մասշտաբները, սոցիալական ամենատարբեր հիմնադրամները, ոչ արտադրական ոլորտի, մշակույթի, գիտության, տնտեսության ազգարային և ռազմաարդյունաբերական հատվածների զարգացումը, ինչպես նաև սեփականության իրավունքների դաշտի ընդլայնումը (ներառելով արժեթղթերի, մտավոր սեփականության, սոցիալական երաշխիքների, պետական պաշտպանվածության և այլ իրավունքներ):

Այսպիսով, կապիտալիստական արտադրաեղանակի զարգացումն ինքնին պայմանավորում է իր իսկ ընդերքում հասարակական սեփականության սաղմնավորումը, ձևավորումն ու զարգացումը, ինչն արդեն ներկայումս զգալի հնարավորություններ է ընձեռում անհատների լիարժեք և ազատ զարգացման և հումանիստական ինքնահիրացման համար: Սակայն դրան դեռևս մեծապես խոչընդոտում են յուրացման մասնավոր-կապիտալիստական հարաբերությունները:

Խնդիրն այն է, որ կապիտալի ընդհանրական ձևը եղել է, կա ու կմնա փողը: Իսկ փողը մի կողմից տնտեսական և քաղաքական ազատություն է, մյուս կողմից՝ իշխանություն մարդկանց նկատմամբ: Եվ այդ իշխանության մասշտաբներն ուղիղ համեմատական են փողի մեջ մարդկային կյանքի օտարման չափերին: Փողի ձևով իշխանության մարմնավորումը կապիտալը հասցրել է այնպիսի աստիճանի, որ այդ իշխանությունը վերացնելու համար պետք է վերացնի ինքն իրեն:

Ճիշտ է, կապիտալն անհրաժեշտ տնտեսական նախադրյալներ է ստեղծում արտադրության և յուրացման հումանիզացման համար, սակայն լիարժեքորեն չի կարող իրացնել այդ նպատակը, քանի որ կկորցնի թե՛ փողը, թե՛ իշխանությունը: Չէ՞ որ իր իշխանությունը պահպանելու համար կապիտալը պետք է պահպանի դրա տնտեսական հիմքը՝ աշխատուժի ապրանքային ձևը: Եվ չնայած կապիտալի օրգանական կազմի աճի հետ մեկտեղ այդ հիմքն աստիճանաբար նեղանում է, այդուհանդերձ, հենց դա է այն ապրանքային ծածկույթը, որն ապահովում է տեխնիկական և հասարակական առաջընթացի նվաճումների յուրացումը:

Հիրավի, քանի դեռ բանվորը տնտեսապես հարկադրված է վաճառել իր աշխատուժը, կտիրապետի կապի շուկայական ձևին, որը հանրայնացված արտադրության վրա հենվող ֆինանսական կապիտալի իրապես ամբողջատիրական իշխանությանը «հագցնում է» ժողովրդավարական տարազ: Դա վաղ թե ուշ գործնականում անհրաժեշտություն կառաջացնի անհատների տնտեսական ազատության աստիճանը տարբերակել ըստ նրանց տնտեսական կարգավիճակի: Արդեն ներկայումս որոշ զարգացած երկրներում (օրինակ՝ Գերմա-

նիայում, Նիդեռլանդներում) այդպիսի տարբերակման նախատիպերն առկա են. գործազուրկի կարգավիճակն ավելի բարձր է, քան սոցիալական նպաստով ապրող քաղաքացունը, իսկ բանվորի կամ աշխատողի կարգավիճակն ընդհանրապես ավելի բարձր է, քան գործազուրկինը: Սա թերևս յուրացման կապիտալիստական համակարգի պայմաններում սեփականության հումանիզացման հնարավոր սահմանն է, քանի որ այլապես հնարավոր չէր լինի մարդուն որևէ կերպ ստիպել վաճառելու իր աշխատուժը:

ЭВОЛЮЦИЯ И ИСТОРИЧЕСКАЯ ПЕРСПЕКТИВА ФОРМ СОБСТВЕННОСТИ И ПРИСВОЕНИЯ

МАРЗПАНЯН А. А.

Резюме

Способ воспроизводства жизнедеятельности людей как общественная форма их бытия составляет экономическое содержание исторических форм собственности. Следует различать формы собственности, выражающие исторический тип способа производства (индивидуальная, частная, общественная), и формы собственности, выражающие уровень обобществления (единоличная и коллективная).

Частная (частно-трудовая и частно-капиталистическая) собственность является формой производительного отчуждения труда индивидов, выражающей исторически определенный способ присвоения жизненных благ – товарное производство. Частная собственность есть исторически необходимая форма реализации гуманистической сущности индивидов. Являясь высшим выражением свободной кооперации экономического труда, она может быть упразднена только упразднением экономического труда. Это функция научно-технического прогресса, а не права.